ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

13 դեկտեմբերի չորեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

178
(2844)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ԱՋԱՏՎԱԾ ՏՆՕՐԵՆՆԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ ՀՀ ԱԱԾ-ի կողմից մանկապարտեզների սնունդի շուրջ բացահայտված ապօրինություններից հետո տնօրեններին ասել են՝ դիմում գրեն, ազատվեն, ինչն էլ տնօրեններն արել են: Ավելին՝ գրել էինք, որ Երեւան քաղաքի մանկապարտեզների տնօրենների են տարել ԱԱԾ՝ հարցաքննության, եւ քննությունը ցույց կտա՝ կկալանավորեն նրանց, թե ոչ: Տեղեկացանք, որ ԱԱԾ-ում հարցաքննված տնօրենների մեջ եղել են նախկին պաշտոնյաների կանայք, որոնցից մեկը Երեւանի թիվ 43 մանկապարտեզի տնօրեն Կարինե Հովակիմյանն է, որը «Խոսրով»-ի արգելոցի նախկին տնօրեն Հրաչյա Հովակիմյանի կինն է: Վերջինիս եւս ասել են՝ դիմում գրի, ինքնակամ ազատվի: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Կարինե Հովակիմյանը նշեց, որ ինքն իր սեփական դիմումի համաձայն է ազատվել աշխատանքից: Ի դեպ, նկատենք, որ ԱԱԾ-ի այս բացահայտումից հետո 11 մանկապարտեզի ազատված տնօրենների զգալի մասը երկար տարիներ աշխատել են նախկին իշխանությունների օրոք, ու նրանց ազատվելու գործընթացն իրականացվեց այս բացահայտումից հետո: Նշենք, որ ԱԱԾ-ն օրերս հայտնեց՝ նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխաների սննդի մատակարարման պետական գնումների մրցույթներում հաղթող ճանաչված եւ սննդի մատակարարմամբ զբաղվող «Հայկազունք» եւ «Ֆոտոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների փաստացի սեփականատեր Յ.Ա-ն, նշված ընկերություններում վարորդ-առաքչի գործառույթներ փաստացի իրականացնող Պ.Մ-ի հետ նախնական համաձայնությամբ, խմբի կազմում մեկ միասնական դիտավորությամբ, խաբեության եղանակով կեղծ փաստաթղթերի օգտագործմամբ, առանձապես խոշոր չափերի գումարներ հափշտակելու դիտավորությամբ, միմյանց գործողությունները փոխլրացնելով, տեղական ինքնակառավարման մարմնի կազմակերպության եւ առեւտրային կազմակերպության կողմից տրվող, իրավաբանական նշանակության փաստ հաստատող եւ հատուցման իրավունք վերապահող, տարբեր տեսակի սննդի պահանջարկի եւ մատակարարված լինելու վերաբերյալ իրականությանը չհամապատասխանող ուռճացված տվյալներ են ներկայացրել: Ըստ ԱԱԾ-ի՝ 2023 թվականի փետրվարից նոյեմբեր ամիսների ընթացքում փոխանցման եղանակով ստացել եւ խաբեության եղանակով հափշտակել են փաստացի չմատակարարված ապրանքների խմբաքանակների դիմաց վճարված առանձնապես խոշոր չափերով գումարները:

Դեկտեմբերի 6-ին Գյումրու ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը հայտարարել էր «Բալասանյան դաշինք»-ի հետ համագործակցության հուշագիրը խզելու մասին: ՔՊ-ն պարզաբանել է, թե խախտվել են համագործակցության գրեթե բոլոր սկզբունքները, որ «Բալասանյան դաշինք»-ը ստվերային կառավարում է իրականացնում Գյումրիում եւ կառավարվում է դրսի ուժերի կողմից: «Ժողովուրդ» օրաթերթին նոր մանրամասներ են հայտնի դարձել ՔՊ-ի եւ «Բալասանյան դաշինք»-ի «ապահարզանի» գործընթացից: Բանն այն է, որ Նիկոլ Փաշինյանը մտադրված է հնարավորինս շուտ ազատվել բոլոր այն համայնքապետերից, որոնք ՔՊ-ական չեն, հանդես են գալիս ընդդիմադիր դիրքերից կամ չեզոք են պահում իրենց: Ինչպես մեր աղբյուրներն են փոխանցում, ժամանակին ՔՊ-ի եւ «Բալասանյան դաշինք»-ի միջեւ համագործակցության հուշագիր կնքելու եւ համատեղ իշխանություն ձեւավորելու գործընթացի «կնքահայրը» եղել է ՊԿԾ ղեկավար Ռոմանոս Պետրոսյանը. նա է բանակցությունները վարել ու պայմանավորվածություն ձեռք բերել, որ դաշինքը կայանա: Հիմա Նիկոլ Փաշինյանը Ռոմանոս Պետրոսյանին ասել է, որ իրեն չի հետաքրքրում, թե վերջինս ինչ պայմանավորվածություններ է ձեռք բերել, ում ինչ է խոստացել, ինքը քաղաքական որոշում ունի, որ տեղական ինքնակառավարման մարմիններում չպետք է լինի մարդ, որը ՔՊ անդամ չէ, այսպես ասած՝ իրենց մարդը չէ. եթե կուսակցության տեսակետը չի կիսում, ապա պետք է շուտ ազատվել նրանից: Այսպիսով, ՔՊ-ն մտադիր է առաջիկայում ազատվել բոլոր ընդդիմադիր համայնքապետերից. Կապան, Գորիս եւ մյուս համայնքներում պետք է ՔՊ-ի «սրտի ղեկավարներ» նշանակվեն: Մեր տեղեկություններով՝ այս ընթացքում ՔՊ-ն «Բալասանյան դաշինք»-ի անդամ ավագանիների վրա ճնշումներ է գործադրում, որպեսզի ավագանիները գնան եւ ընտրեն այն թեկնածուին, ում ՔՊ-ն կասի: Փաշինյանը նպատակ ունի իր տիկնոջ՝ Աննա Հակոբյանի մորաքրոջ թոռանը՝ Վահագն Մկրտչյանին դարձնել Գյումրու համայնքապետ: Իրավիճակի վերաբերյալ փորձեցինք մեկնաբանություն ստանալ նաեւ Ռոմանոս Պետրոսյանից, սակայն վերջինս մեր զանգերին չպատասխանեց:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ նախաքննական մարմինը քննարկել է այն հարցը, որ ՔՊ-ական պատգամավոր Սերգեյ Բագրատյանի կնոջը՝ Նաիրա Հակոբյանին, պետք է հարցաքննել: Դիմեցինք Գլխավոր դատախազություն՝ հասկանալու համար՝ նա հարցաքննվել է, թե ոչ: Ի պատասխան՝ հայտնեցին՝ այս պահին դեռ չի հարցաքննվել: Հիշեցնենք, որ նոյեմբերի 28-ին հայտնի դարձավ՝ ոստիկանությունը բերման է ենթարկել ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Սերգեյ Բագրատյանի կնոջ անունով գրանցված՝ հանքարդյունահանմամբ զբաղվող ընկերության տնօրենին ու աշխատակիցներին: Իրավապահները ապօրինի գործող հանքի տարածքից նրանց տեղափոխել են քննչական մարմին: Ավազի հանքի աշխատանքը դադարեցվել է: Պատգամավորի կնոջ ընկերության կողմից ավազի ապօրինի արդյունահանման հետեւանքով պետությանը խոշոր վնաս է պատճառվել: Այս մասին «Հետք»-ի հարցմանն ի պատասխան հայտնել էին Գլխավոր դատախազությունից: Ըստ դատախազության՝ 2023 թ.-ի մարտի 13-ին Ռանչպար բնակավայրի վարչական տարածքում առանց ընդերքօգտագործման իրավունքի 6750 խորանարդ մետր ավազակոպճային լեռնային զանգված է տեղահանվել, որի հետեւանքով 2.4 հեկտար հողաբուսական շերտ է վնասվել: Ապօրինի ձեռնարկատիրության, հողը փչացնելու, ընդերքի պահպանման եւ օգտագործման կանոնները խախտելու հատկանիշներով (երեք դրվագ) քրեական վարույթ է նախաձեռնվել: Նշենք՝ ըստ «Հետք»-ի՝ Արարատի մարզի Ռանչպար բնակավայրում ավազի ապօրինի հանք է շահագործվում: Պարզվել է, որ հանքարդյունահանողը ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Սերգեյ Բագրատյանի կնոջ ՍՊԸ-ն է: Հանքավայրը շահագործելուց առաջ փորձաքննություններ չեն իրականացվել, հանքարդյունահանման պայմանագիր չի կնքվել: Հայաստանի սեփականությունը համարվող ընդերքն ամիսներ շարունակ ապօրինի արդյունահանվել է:

ՀՀ վիճակագրական կոմիտեն ամփոփել է 2023 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսների հիմնական ժողովրդագրական ցուցանիշները. ստորեւ ներկայացնում ենք բնակչության բնական շարժի տվյալները: Հրապարակված նախնական տվյալների համաձայն՝ 2023 թվականի ընթացքում մահացածների ընդհանուր թվաքանակը կազմել է 20 հազար 152 մարդ: 2022 թվականի համեմատ՝ այս ցուցանիշը նվազ է 316-ով: Ցուցանիշում մահվան հիմնական պատճառները եղել են արյան շրջանառության համակարգի հիվանդությունները, նորագոյացությունները, շնչառական օրգանների հիվանդությունները եւ այլ հիվանդություններ: ՀՀ բնակչության ծնվածների քանակը հունվար-հոկտեմբեր ամիսներին կազմել է 30 հազար 186 մարդ: Այս տվյալը ներառում է նաեւ մեռելածինների ցուցանիշները: Նախորդ տարվա համեմատ՝ այս ցուցանիշը աճել է 258-ով, եւ 2021 թվականի համեմատ՝ նվազել 134-ով: ՀՀ պետական սահմանի եւ՛ օդային, եւ՛ ցամաքային անցման կետերով 2023 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսներին, նախնական տվյալների համաձայն, Հայաստան է եկել 4 մլն 70 հազար 389 մարդ, որից 1 մլն 646 հազար 333-ը ՀՀ փաստաթղթերով են հատել սահմանը:



Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ՆՄԱՆ ՉԵՆ

ԳՅՈՒՄՐԻՈՒՄ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՍՑԵՆԱՐԸ ՉԻ ԼԻՆԻ

«Քաղաքացիական պայմանագիր»-ը միակողմանիորեն խզում է «Բալասանյան դաշինք» սոցիալական կուսակցության հետ երկու տարի առաջ ստորագրած համագործակցության մասին հուշագիրը. հայտարարել է կուսակցությունը:

Նման որոշման պատճառը, ըստ «Քաղաքացիական պայմանագրի», այն է, որ Գյումրին չի կառավարվում Հայաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով, եւ «քաղաքում իրականացվում է ստվերային կառավարում, ինչը անարդյունավետ է դարձնում թե՛ Գյումրիի քաղաքապետարանի գործունեությունը եւ թե՛ «Քաղաքացիական պայմանագրի» ներկայացուցիչների աշխատանքը քաղաքապետարանի գործադիր օղակներում»:

Երկու տարի առաջ կայացած ընտրություններում «Բալասանյան դաշինք»-ն ամենաշատ ձայներն էր ստացել, բայց ոչ այնքան, որ միայնակ իշխանություն ձեւավորեր. այն, ի վերջո, ՔՊ-ի հետ կոալիցա կազմեց: ՔՊ-ն այժմ պնդում է՝ հուշագիրը մնացել է թղթի վրա, այդ պատճառով էլ իր երկու փոխքաղաքապետերը հրաժարական են տվել: Ըստ խմբակցության՝ համայնքապետարանում պաշտոններ ստացած իրենց կուսակիցները «Բալասանյան դաշինք»-ի հետ խնդիրներ են ունեցել. փաստաթղթեր չեն տրամադրվել, այդ թվում՝ ֆինանսական:

«Ժողովուրդ» օրաթերթի զրուցակիցն է ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Դավիթ Առուշանյանը:

-Պարոն Առուշանյան, այժմ քաղաքական դաշտում ամենաքննարկվող թեմաներից է Գյումրիում տեղի ունեցող իրադարձությունները: Այնտեղ ՔՊ-ն խզեց հուշագիրը «Բալասանյան դաշինք»-ի հետ՝ պարզաբանելով, թե համագործակցային կանոնները չեն պահպանվել, եւ ստվերային կառավարում է իրականացվել: Ի վերջո, ի՞նչ է կատարվել, եւ եթե կան չարաշահումներ, ինչո՞ւ այդ մասով դատախազություն չեք դիմում:

-Մեր մամուլի ասուլիսը տեղի է ունեցել, եւ, բացի դրանից, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունն իր հայտարարությունը տարածել էր: Մենք ավելացնելու որեւէ բան չունենք, քանի որ ամեն ինչ ասված է եղել մամուլի ասուլիսի ժամանակ եւ նաեւ հաղորդագրության մեջ: Հստակ է ամեն ինչ գրված: Պարզ է, թե ինչու է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը խզել հուշագիրը: Այստեղ ցանկանում եմ երկու արձանագրում անել՝ առաջինը, որ մենք կառչած չենք մեր աթոռներից ու պաշտոններից: Մեզ համար իշխանությունն ինքնանպատակ չէ: Իշխանություն ունենալը մեզ համար աշխատանքի արդյունավետություն ապահովելն է: Այս պարագայում մենք գյումրեցիներին նախընտրական ծրագիր էինք ներկայացրել, որի համար էլ ստացել էինք նրանց քվեն: Դե յուրե հուշագրով մենք իշխանություն էինք, բայց հնարավորություն չունեինք այնտեղ իրագործել այն նախընտրական ծրագրերն ու խոստումները, որի համար գյումրեցիները մեզ քվե էին տվել: Եվ մենք, մեր ընտրողների հանդեպ արդար լինելով, խզել ենք հուշագիրը, եւ հիմա 11 մանդատով ավագանու անդամները կատարելու են իրենց վերապահված լիազորությունները:

-Շատ է խոսվում այն մասին, որ դուք պատրաստվում եք Ալավերդու սցենարը Գյումրիում կրկնել: Հիմա էլ, փաստորեն, ցանկանում եք հասնել Բալասանյանի հեռացմանը:

-Ալավերդու եւ Գյումրու իրավիճակը իրարից 180 աստիճան տարբեր են: Ալավերդիում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը եկել է իշխանության, իսկ Գյումրիում «Քաղաքացիական պայմանագիր»-ը հրաժարվել է իշխանությունից: Այսինքն՝180 աստիճան տարբեր պատկեր ունենք մենք Ալավերդիում: Եվ Ալավերդիում այլ խնդիր էր, մեկ ձայնի խնդիր էր, իսկ Գյումրիում 33 ավագանուց ՔՊ-ն ունի 11 ավագանի: Մեր օրակարգում չկա որեւիցե նման սցենար: Այն, ինչ բարձրացվել է, դա է իրողությունը: 33 ավագանու մեջ 11 ձայնով իմպիչմենտի հասնել հնարավոր չէ:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱՅԼԸՆՏՐԱՆՔ ՉԿԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՄԻՋԵՎ ԿԱ ՓՈԽԸՄԲՌՆՈՒՄ

Հայաստանի ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Վաղարշակ Հակոբյանի գնահատմամբ՝ Հայաստանն այժմ Ադրբեջանի հետ խաղաղության պայմանագրի մասով գտնվում է խորը եւ շատ արդյունավետ բանակցությունների մեջ: Հակոբյանը նման դիրքորոշում հայտնեց խորհրդարանում լրագրողների հետ զրույցում:

«Հայաստանի Հանրապետությունն Ադրբեջանի հետ այժմ գտնվում է խորը բանակցային գործընթացի մեջ՝ խաղաղության պայմանագրի մասով: Այսօր մեր օրակարգում խաղաղության պայմանագիրն է եւ դրանից բխող քայլերի հաջողությունը: Կարծում եմ՝ մենք պետք է օգտագործենք բոլոր հնարավոր հարթակները՝ խաղաղության պայմանագիրը եւ խաղաղության, անվտանգության վերջնական հաստատումն անառարկելի իրականություն դարձնելու համար»,-ասաց Հակոբյանը:

Պատգամավորը միեւնույն ժամանակ վստահեցրեց, որ Հայաստանը չի կարող աչք փակել իր քաղաքացիների նկատմամբ կատարված ռազմական հանցագործությունների վրա, բոլոր հարթակներում խոսում է Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած տարբեր խախտումների մասին:

Պատգամավորը համակարծիք է ԵՄ արտաքին քաղաքականության եւ անվտանգության հարցերով բարձրագույն ներկայացուցիչ Ժոզեպ Բորելի գնահատականի հետ, որ պատմական հնարավորություն կա Հարավային Կովկասի տարածաշրջանում խաղաղության հասնելու համար:

«Այդ հնարավորությունները երկուստեք պայմանավորվածությունների արդյունքում են արտացոլվում: Ես կարծում եմ, որ այսօր կա փոխըմբռնում երկու երկրների միջեւ, որ խաղաղության պայմանագիրն այլընտրանք չունի: Սա ամենամեծ ձեռքբերումներից է, որ մենք ունեցել ենք վերջին շրջանում: Հայաստանի Հանրապետությունը, արդեն տեւական ժամանակ իր օրակարգում խաղաղությունը որպես առաջնային դարձնելով, գնում է խաղաղության պայմանագրի ստորագրման ուղղությամբ»,- նշեց նա:

ՄՈՍԿՎԱՆ ԵՎՍ ՊԱՏՐԱՍՏ Է ԱՋԱԿՑԵԼ

Մոսկվան ողջունում է հարաբերությունները կարգավորելու եւ խաղաղության պայմանագիր կնքելու՝ Երեւանի եւ Բաքվի փոխադարձ ցանկությունը. այդ մասին ամենաբաթյա ճեպազրույցում հայտարարել է ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչը: Մարիա Զախարովան հավելել է, որ ռուսական կողմը ողջունում է նաեւ գերիների փոխանակման վերաբերյալ Հայաստանի եւ Ադրբեջանի պայմանավորվածությունը: Նրա խոսքով՝ դա հաշտեցման լրացուցիչ հնարավորություններ է ստեղծում՝ Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի առաջնորդների պայմանավորվածություններին համապատասխան: «Ինչ վերաբերում է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության պայմանագրի ստորագրման ժամկետներին, մենք ի սկզբանե ասել ենք՝ այդ ժամկետը պետք է որոշեն կողմերը: Մոսկվան էլ իր հերթին պատրաստ է այսուհետ էլ աջակցել գործընկերներին հավասարակշռված համաձայնագրի մշակման գործում: Նման փաստաթուղթը կոչված է հուսալի հիմքեր ձեւավորելու տարածաշրջանում կայուն խաղաղության եւ կայունության համար»,- ասել է Զախարովան:

ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԳՆԵՐՆ ԱՃԵԼ ԵՆ

2023 թվականի հոկտեմբերին, նախորդ տարվա հոկտեմբերի համեմատ, Երեւանում բնակարանների գներն աճել են 13.7%-ով: Այս մասին դեկտեմբերի 12-ին լրագրողների հետ հանդիպմանն ասաց ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության վարչության պետ Հայկ Ավետիսյանը: Նա հավելեց, որ Երեւանում մեկ ամսվա ընթացքում բնակարանների գներն աճել են 2,7%-ով: «Այս տարվա հոկտեմբերին, սեպտեմբերի համեմատ, գործարքներն աճել են 15 տոկոսով, իսկ 2022 թվականի հոկտեմբերի համեմատ՝ 18,8 տոկոսով: Աճում է եւ՛ պահանջարկը, եւ՛ առաջարկը»,- նշեց Ավետիսյանը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆԻՆ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՏՎԵԼ

Ազգային Ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Վահե Ղալումյանի նկատմամբ վարույթ է հարուցվել վարչական իրավախախտման վերաբերյալ: Ղալումյանի կողմից հայտարարագրման ենթակա տվյալները «Հայտարարատու պաշտոնատար անձի 2019 թվականի գույքի, եկամուտների եւ շահերի» հայտարարագրում չներկայացնելու փաստի առթիվ 2021 թվականին մարտի 11-ին է հարուցվել վարույթը: Վահե Ղալումյանի կողմից 2020 թվականի մայիսի 25-ին ներկայացրած «Պաշտոնատար անձի 2019 թվականի գույքի, եկամուտների եւ շահերի» հայտարարագրում «Դրամական միջոցները» բաժնի «Բանկային հաշիվների մնացորդներ» ենթաբաժիններում պատգամավորն առերեւույթ չի հայտարարագրել իր դրամական միջոցները՝ բանկային հաշիվներին առկա մնացորդները, ինչի առնչությամբ 2021 թվականի մարտի 11-ին Վահե Ղալումյանը հրավիրվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու համար, սակայն լինելով պատշաճ ծանուցված՝ չի ներկայացել: Ղալումյանի արդարացումը եղել է այն, որ նա բանկային հաշիվների մնացորդների մասին տվյալներ չի ունեցել եւ շփոթությամբ թերի է լրացրել, եւ ներողություն է խնդրել: Խախտումը հաստատվել է, սակայն հանձնաժողովը որոշում է կայացրել Վահե Ղալումյանին ազատել վարչական պատասխանատվությունից՝ կատարելով բանավոր նկատողություն: Ղալումյանին տվել են 7 օր հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղումներ անելու համար: Հիշեցնենք, որ Վահե Ղալումյանը Նիկոլ Փաշինյանի ընտանիքի քավորն է: Ստացվում է, որ քավոր-սանիկական հարաբերություններով պաշտոնի եկածների հանդեպ վարչական տուգանքի օրենքը չի ազդում, եւ նրանք պարզապես բանավոր կերպով զգուշացվում են:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ ԿԳԱՆ

Հայաստան վերադարձող գերիների թվում են նաեւ Գեղարքունիքի մարզում առեւանգված Վլադիմիր Ռաֆայելյանն ու Իշխան Սարգսյանը: Հայաստանի Հանրապետության երկու քաղաքացիներին մեղադրանք էր առաջադրվել Ադրբեջանի տարածքում, իբր, ահաբեկչական գործողությունների իրականացման համար: Ադրբեջանական կողմը գտնում էր, որ, իբր, 2021 թվականի մայիսի 27-ին ՀՀ ՊՆ հատուկ նշանակության հետախուզական զորքերի խմբի հրամանատար Իշխան Աշոտի Սարգսյանը եւ ինժեներ-սակրավոր Վլադիմիր Օթարի Ռաֆայելյանը Արցախի Շահումյանի շրջանում (Քելբաջարի շրջան), որտեղ այդ ժամանակ գտնվում էին Ադրբեջանի զինված ուժերը, ականապատել են Յուխարի Այրըմ գյուղի մոտ գտնվող ճանապարհներից մեկը: Սրան հայկական կողմը հակադարձել էր՝ պնդելով, որ նրանք 2021 թվականի մայիսի 27-ին Գեղարքունիքի մարզի սահմանային հատվածում՝ ՀՀ ՋՈՒ N զորամասի պահպանության տարածքում, ինժեներական աշխատանքներ են կատարել, եւ հայ զինծառայողները գտնվել են Հայաստանի Հանրապետության տարածքում ու չեն հատել սահմանը: Հիշեցնենք, որ Բաքվի Սաբունչիի շրջանային դատարանում Վլադիմիր Ռաֆայելյանին դատապարտել էին 18 տարվա ազատազրկման, իսկ Իշխան Սարգսյանին՝ 19: Նշենք, որ Հայաստանի կողմից գերիների անունների պաշտոնական հաստատում չի եղել:

ՄԻՐՋՈՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՎՃՌԱԿԱՆ Է

«Հայաստանը հստակ որոշում է կայացրել ընտրել ժողովրդավարացման եւ բարեփոխումների անշրջելի ուղին»,- երեկ Բրյուսելում Արեւելյան գործընկերության նախարարական հանդիպմանը հայտարարել է Հայաստանի արտգործնախարար Արարատ Միրզոյանը:

«Չնայած վերջին տարիներին Հայաստանի առջեւ ծառացած բոլոր մարտահրավերներին՝ ժողովրդավարացման գործընթացը եւ բարեփոխումների հավակնոտ օրակարգի իրականացումը Հայաստանում ոչ մի վայրկյան կանգ չի առել»,- ասել է Միրզոյանը՝ շեշտելով՝ Հայաստանը վճռական է շարունակելու այս ուղին Եվրոպական միության զգալի աջակցությամբ:

«Մեր վճռականության վերջին դրսեւորումը Հայաստանում Հռոմի ստատուտի վավերացումն էր: Միանալով Արդարադատության միջազգային դատարանին՝ Հայաստանն իր ներդրումն է ունեցել միջազգային իրավակարգի ամրապնդմանը՝ միեւնույն ժամանակ վերահաստատելով սեփական ազգային շահերից բխող որոշումներ կայացնելու ինքնիշխան իրավունքը», - ասել է Միրզոյանը:

«Երեւանը ողջունում է Եվրոպական հանձնաժողովի որոշումը առաջարկել Եվրոպական խորհրդին սկսել անդամակցության բանակցություններ Մոլդովայի եւ Ուկրաինայի հետ եւ Վրաստանին շնորհել թեկնածուի կարգավիճակ»,- հայտարարել է արտգործնախարարը՝ ընդգծելով՝ Հայաստանի ժողովուրդը նույնպես ունի եվրոպական ձգտումներ:

«Մենք հանձնառու ենք ոչ միայն շարունակել այս ճանապարհը, այլեւ այնքան մոտենալ Եվրոպական միությանը, որքանով Եվրոպական միությունը դա հնարավոր կհամարի», - ասել է արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը:

«Հայաստանի կառավարությունն ունի տարածաշրջանում կայուն եւ տեւական խաղաղություն կառուցելու քաղաքական կամք»,-ասել է Միրզոյանը՝ ընդգծելով, որ Երեւանը պատրաստ է առաջ շարժվել այս ուղղությամբ՝ հիմնվելով Գրանադայում ընդունված սկզբունքների վրա՝ տարածքային ամբողջականության փոխադարձ ճանաչում, սահմանների փոխադարձ ճանաչում, հաղորդակցությունների, տրանսպորտային ենթակառուցվածքների բացում:

«Բազմաթիվ առիթներով մենք ցույց ենք տվել մեր պատրաստակամությունն ու վճռականությունը մեր հարեւանների հետ հարաբերությունների կարգավորման միջոցով տեւական խաղաղություն եւ կայունություն հաստատել տարածաշրջանում, որտեղ բոլոր երկրները կապրեն բաց սահմաններով եւ կապված կլինեն ակտիվ տնտեսական, քաղաքական ու մշակութային կապերով», - ասել է Միրզոյանը՝ նշելով Հայաստանի ապագայի տեսլականը՝ «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը՝ որպես խաղաղության օրակարգի մաս:

«Այս ծրագրի հիմքում ընկած է տարածաշրջանային հաղորդակցությունների զարգացումը՝ ճանապարհների, երկաթուղիների, խողովակաշարերի, մալուխների եւ էլեկտրական գծերի վերանորոգման, կառուցման եւ շահագործման միջոցով: Ավելին՝ Ադրբեջանի հետ վերջերս ընդունված համատեղ հայտարարությունը՝ գերիների ու պահվող անձանց փոխանակման եւ COP29 համաժողովի վերաբերյալ, Հայաստանի համաձայնությունը Հարավային Կովկասում խաղաղության եւ կայունության հասնելու մեր վճռականության եւս մեկ դրսեւորում է», - հայտարարել է Միրզոյանը՝ հույս հայտնելով, որ այս դրական ազդակից հետո Ադրբեջանը հավատարիմ կմնա խաղաղության գործընթացին:

«Մենք կարծում ենք, որ այս ձեւաչափն ու նախաձեռնությունները, որոնցում մենք ներգրավված ենք, պետք է ծառայեն մեր գործընկերների եւ հարեւանների հետ մեզ ավելի մոտեցնելու վերջնական նպատակին: Անհրաժեշտ եմ համարում վերահաստատել, որ գործընկեր բոլոր երկրները պետք է հավատարիմ լինեն նույն արժեքներին եւ սկզբունքներին, քանի որ առանց մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների հարգման, առանց ապահով եւ խաղաղ միջավայրի ցանկացած նախաձեռնություն դատապարտված է ձախողման»:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՆՈՐ ԿԱՐԳ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանն անդրադարձել է ձկնաբուծարանների գործունեության նոր կարգի ներդրմանը, որը ձկնաբույծների մոտ դժգոհության ալիք է բարձրացրել: Վարչապետը թեմային անդրադարձել է Շրջակա միջավայրի նախարարության հաշվետվության քննարկման ժամանակ: «Ակնհայտ է, որ մենք պետք է հետեւողական լինենք, չենք կարող մեր քաղաքականությունները հետ ու առաջ անել, մենք պետք է գնանք առաջ: Դա էլ է հարց՝ մենք որքան ջուր ենք վատնում՝ որքան ձուկ արտադրելու համար, եւ այդ բալանսն ինչ արժե: Մեկ այլ բան ասեմ. եթե մեզ ձուկ անհրաժեշտ լինի, մենք կարող ենք այլ տեղից ձեռք բերել, բայց եթե մեզ ջուր անհրաժեշտ լինի, մենք չենք կարող այլ տեղից այն բերել: Եվ սա ազգային անվտանգության հարց է»,- նշել է վարչապետը: Կառավարությունը նախատեսում է ձկնաբուծարանների գործունեության նոր կարգ ներդնել, որով նախատեսվում է վարչական պատասխանատվություն սահմանել ձկնաբուծարանների կողմից առանց փակ շրջանառու համակարգի հորատանցքի միջոցով ստորերկրյա քաղցրահամ ջրերից ջրօգտագործում իրականացնելու համար: Համապատասխան օրենսդրական նախաձեռնությունն արդեն իսկ արժանացել է գործադիրի հավանությանը:

50 ՄԼՆ ԵՎՐՈՅԻ ՎԱՐԿ

Հայաստանը նախատեսում է ներգրավել 50 մլն եվրո գումարի չափով բյուջետային աջակցության վարկ: Հայաստանի Հանրապետության եւ ՕՊԵԿ-ի (Նավթ արտահանող երկրների կազմակերպություն) միջազգային զարգացման հիմնադրամի միջեւ ««Կանաչ, դիմակայուն եւ ներառական զարգացման ծրագիր» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագիծն Ազգային ժողովի նիստում ներկայացրեց ՀՀ ֆինանսների փոխնախարար Էդուարդ Հակոբյանը: «Միջոցներն ուղղվելու են 2023 թ. բյուջեի մասին օրենքով սահմանված պակասուրդի ֆինանսավորմանը կամ ծախսերի ֆինանսավորման կարիքի բավարարմանը, որի համար Ազգային ժողովն արդեն պետական բյուջեի մասին օրենքով հաստատել էր 350 մլն դոլար բյուջետային աջակցության վարկերի ներգրավում: Սակայն հաշվի առնելով, որ մեր պլանավորված կապիտալ ծախսերը՝ 550 մլրդ, գերազանցում են մեր պլանավորած 290 մլրդ պակասուրդը՝ այդ միջոցներն ուղղվելու են կապիտալ ծախսերին, որոնց կազմում են դպրոցներ, մանկապարտեզներ, ճանապարհներ, այլ բնույթի ենթակառուցվածքներ»,- ասաց Հակոբյանը՝ հավելելով, որ դրանք ունեն տնտեսության վրա բավականին դրական ու ներուժը բարձրացնող ազդեցություն:

ՃԱՆԱՊԱՐՀԸ ՓԱԿ Է

Ռազմավարական ճանապարհի մի հատվածում մեծ բեռնատարների երթեւեկությունն արգելված է Վրաստանում եղանակի վատթարացման պատճառով. այդ մասին հաղորդել են Ռուսաստանի արտակարգ իրավիճակների նախարարության Հյուսիսային Օսիայի գլխավոր վարչությունում: «Վրաստանի տարածքում եղանակային պայմանների վատթարացման եւ տրանսպորտային միջոցների անվտանգ երթեւեկության ապահովման անհնարինության պատճառով, ինչպես նաեւ հաշվի առնելով Վրաստանի սահմանապահ ոստիկանության հանձնարարականները՝ դեկտեմբերի 12-ի ժամը 06:45-ից մինչեւ հատուկ կարգադրության հրապարակումն արգելված է մեծաբեռնատար փոխադրամիջոցների երթեւեկությունը Վլադիկավկազ քաղաք-Լարս բնակավայր ընկած հատվածում՝ Ռուսաստանի Դաշնությունից ելքի ուղղությամբ», - ասված է հաղորդագրության մեջ:

ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

ԲԱՆԱԿՈՒՄ ՉԾԱՌԱՅԱԾՆԵՐԸ ՉԵՆ ԴԱՏԱՊԱՐՏՎԻ

Ազգային ժողովի արտահերթ նիստում քննարկվում է ՔՊ-ական պատգամավոր Հայկ Սարգսյանի ««Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին» եւ «ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթն առաջին ընթեցմամբ ընդունելու մասին հարցը:

Օրենքով սահմանված՝27 տարին լրանալուց հետո պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացին չի կարող զորակոչվել պարտադիր զինվորական ծառայության, քանի որ նրա տարիքը գերազանցում է պարտադիր զինվորական ծառայության սահմանային տարիքը: Այսպիսով, 27 տարին լրանալուց հետո ներկայանալու դեպքում քաղաքացու համար գործում է մեկ տարբերակ՝ պատժվել ազատազրկմամբ:

«Առաջարկվող նախագծով նախատեսվում է 27 տարին լրացած եւ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիներին հնարավորություն տալ անցնելու զինվորական ծառայություն՝ միաժամանակ ՀՀ պետական բյուջե վճարելով համապատասխան գումարներ, կամ, առանց զինվորական ծառայություն անցնելու, պետական բյուջե վճարել համապատասխան գումար՝նշված բոլոր դեպքերում ազատվելով քրեական պատասխանատվությունից:

Մասնավորապես՝

նախագծով 27-ից 37 տարեկան քաղաքացուն հնարավորություն է տրվում՝

1) զինվորական ծառայություն անցնել 24 ամիս ժամկետով,

2) զինվորական ծառայություն անցնել 12 ամիս ժամկետով եւ ՀՀ պետական բյուջե վճարել երկու միլիոն հինգ հարյուր հազար ՀՀ դրամ,

3) զինվորական ծառայություն անցնել 6 ամիս ժամկետով եւ ՀՀ պետական բյուջե վճարել հինգ միլիոն ՀՀ դրամ,

4) զինվորական ծառայություն անցնել 1 ամիս ժամկետով եւ ՀՀ պետական բյուջե վճարել տասը միլիոն ՀՀ դրամ,

5) զինվորական ծառայության փոխարեն ՀՀ պետական բյուջե վճարել տասնհինգ միլիոն ՀՀ դրամ:

Բացի այդ, գործող իրավակարգավորումների համաձայն՝ ՀՀ-ում ծնված կամ մինչեւ 27 տարին լրանալը ՀՀ քաղաքացիություն ստացող անձինք ենթակա են 2 տարի ժամկետով պարտադիր զինվորական ծառայության, իսկ 27 տարին լրանալուց հետո ՀՀ քաղաքացիություն ստացող անձինք այդպիսի պարտականություն չունեն, ինչն էական անհավասարություն է առաջացնում հիշյալ երկու խմբի ՀՀ քաղաքացիների միջեւ վերջիններիս համապատասխան պարտականությունները հավասարակշռելու առումով:

Նախագծի փաթեթի ընդունման դեպքում պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա կլինեն նաեւ 27 տարին լրանալուց հետո օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած արական սեռի քաղաքացիները: Ընդ որում՝ նրանք կարող են 12 ամիս ժամկետով պարտադիր զինվորական ծառայություն անցնել ՀՀ զինված ուժերում կամ ՀՀ պետական բյուջե վճարել երկու միլիոն հինգ հարյուր հազար ՀՀ դրամ եւ ազատվել զինվորական ծառայությունից»,- նշված է նախագծում:

«Եթե 27 տարին լրացած քաղաքացիներին չընձեռնվի նախագծով առաջարկվող հնարավորությունը, ապա գործող կարգավորումներով նա չի վերադառնա հայրենիք մինչեւ 37 տարեկանը լրանալը, քանի որ 37 տարեկանում քաղաքացին ազատվում է քրեական հետապնդումից՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու հիմքով: Հասկանալի պատճառներով այս դեպքում նրանցից քչերի մոտ պահպանված կլինի հայրենիք վերադառնալու ցանկությունը, իսկ վերադարձողները եւ չեն ծառայի Հայաստանի զինված ուժերում, եւ Հայաստանի պետական բյուջե գումար չեն վճարի»,- ասաց Հայկ Սարգսյանը:

Նա նշեց, որ այս նախագիծը բանակին տալու է նոր զորակոչիկների եւ նոր ֆինանսական միջոցների հնարավորություն, որ այս պահին չունի բանակը, որը վատնում են այս օրենքը չընդունելով մինչ այս պահը:

«Միայն կշահենք օրենքի ընդունման դեպքում»,- ընդգծեց ՔՊ-ական պատգամավորը:

Նա ասաց, որ օրենքի նախագիծը ոչ թե բանակում չծառայելու հնարավորություն է տալիս, այլ չդատապարտվելու: Հայկ Սագսյանը հստակեցրեց, որ օրենքի ընդունումից հետո ՀՀ այն քաղաքացիները, որոնք ենթակա են պարտադիր զինվորական ծառայության, նրանք չեն կարող օգտվել այս օրենքի ընձեռած հնարավորությունից, նրանք պետք է ծառայեն, ունեն ծառայելու պարտավորություն եւ հնարավորություն. օրենքը կտարածվի նրանց վրա, ովքեր գործող կարգավորումներով ծառայության հնարավորություն չունեն:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

ԿԱՇԽԱՏԵՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ

Ստեղծվել է էլեկտրոնային դատավարության նոր համակարգ, որն ապահովելու է քաղաքացիական գործերի փոխանցումը մեկ ատյանից մյուսը, ինչպես նաեւ կողմ-կողմ, կողմ-դատարան փաստաթղթաշրջանառությունը էլեկտրոնային համակարգի միջոցով. այս մասին հայտնում է Բարձրագույն դատական խորհրդի նախագահ Կարեն Անդրեասյանը:

«Այս բարեփոխման արդյունքում հնարավոր կդառնա դատարան ապացույցներ ներկայացնելը, միջնորդություններ եւ դատավարական այլ գործողություններ կատարելը էլեկտրոնային եղանակով:

Այս ամենը չի զրկելու մեր քաղաքացիներին ավանդական դատավարությունների եղանակով ստանալ արդարադատություն, քանի որ դատավարության մասնակիցները հնարավորություն են ունենալու իրենց նախընտրությամբ օգտվել թղթային կամ էլեկտրոնային համակարգերից:

Այս փոփոխության արդյունքում քաղաքացիներն ու նրանց փաստաբանները, ինչպես նաեւ դատարանները կխնայեն իրենց ժամանակը, կազատվեն ավելորդ քաշքշուկից, կնվազեցնեն իրենց ծախսերը: Հարկ է նշել, որ միայն այս համակարգի գործարկման արդյունքում պետությունը կկարողանա խնայել տարեկան ավելի քան կես միլիարդ ՀՀ դրամ:

Ի դեպ, ոչ միայն մշակվել է այս համակարգի ծրագրային ապահովումը, այլեւ արդեն իսկ դատարաններում լուծվել է տեխնիկական հագեցվածության հարցը, քաղաքացիական մասնագիտացման դատավորներն անցել են անհրաժեշտ վերապատրաստումներ:

Առաջիկա օրերին սպասվող օրենսդրական հրատապ փոփոխությունների ընդունման դեպքում արդեն 2024 թվականի հունվարից քաղաքացիական դատարանները կաշխատեն նոր համակարգով:

Երկար տարիներ քննարկված, սպասված եւ վերջապես իրագործված այս մեծագույն հաջողության համար երախտապարտ ենք Կառավարությանը, Ազգային ժողովին, Արդարադատության նախարարությանը, Դատական դեպարտամենտին, ինչպես նաեւ Եվրամիությանը եւ Եվրոպայի խորհրդին»,-նշվում է հայտարարության մեջ:

ԴԱՆԱԿԱՀԱՐԵԼ ԷՐ ՀԱՄԱՔԱՂԱՔԱՑՈՒՆ

Դեկտեմբերի 9-ին՝ ժամը 21.51-ին, ՆԳՆ ոստիկանության Կոտայքի մարզի օպերատիվ կառավարման կենտրոն «Աբովյան» բժշկական կենտրոնից հաղորդում է ստացվել, որ կտրած-ծակած վնասվածքով 34-ամյա երիտասարդ է բուժօգնության տեղափոխվել:

Ոստիկանությունից հայտնում են, որ ՆԳՆ ոստիկանության Կոտայքի բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած միջոցառումների արդյունքում պարզվել է, որ աբովյանցի երիտասարդին մարմնական վնասվածքը պատճառել էր 16-ամյա համաքաղաքացին: Ժամը 22-ին նա հայտնաբերվել, ձերբակալվել եւ ներկայացվել է Աբովյանի քննչական բաժին:

Ձեռնարկվում են միջոցառումներ՝ հանցագործության գործիք դանակը հայտնաբերելու ուղղությամբ:

Կազմված փաստաթղթերն ուղարկվել են Աբովյանի քննչական բաժին՝ քրեական վարույթ նախաձեռնելու հարցը քննարկելու համար:

ԼՈՒՐԵՐ

ԿՐԱԿՈՑՆԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝Տիգրան Հրաչյայի Միհրանյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, 2023 թվականի փետրվարի 08-ին՝ժամը 01:20-ի սահմաններում, գտնվելով Երեւան քաղաքի Ջրվեժ Մայակ թաղամասի 2-րդ շենքի հարակից հատվածում գտնվող ավտոկանգառի մոտ, իր փոքր եղբոր՝Հայկ Միհրանյանի, ընկերոջ՝ Բարսեղ Թովմասյանի եւ քննությամբ դեռեւս ինքնությունները չպարզված այլ ընկերների հետ միասին հանդիպել են Ռաֆայել Խաչատրյանին, Միքայել Ադամյանին, Մկրտիչ Չոբանյանին, Արթուր Գավիթի Բաբայանին, այնուհետեւ քննությամբ ինքնությունները դեռեւս չպարզված՝ վերջիններիս այլ ընկերներին՝ Ռաֆայել Խաչատրյանի կողմից Տիգրան Միհրանյանի մորեղբոր աղջկան՝ Ռեգինե Մանուկյանին սիրահարված լինելու եւ Միքայել Ադամյանի կողմից Տիգրան Միհրանյանից քննությամբ կոնկրետ հասցեն դեռեւս չպարզված վարձակալած խանութի վարձավճարի հարցերի շուրջ զրուցելու համար, որտեղ նրանց միջեւ սկսված զրույցը վերածվել է վիճաբանության, ապա՝ քաշքշուկի, ինչի ընթացքում Տիգրան Միհրանյանը նախապես իր հետ վերցված, քննությամբ դեռեւս չպարզված ինքնաշեն կամ ձեւափոխված ողորկ անցուղի փող ունեցող զենքի գործադրմամբ Արթուր Դավիթի Բաբայանին ապօրինաբար կյանքից զրկելու դիտավորությամբ կրակել է վերջինիս ուղղությամբ:

Արդյունքում Ա. Բաբայանին պատճառել է կյանքին վտանգ սպառնացող՝ որովայնի առաջային պատի հրազենային թափանցող վնասվածքի ձեւով՝ բարակ աղու գալարների բազմաթիվ թափանցող վնասումներով, բարակ աղու միջընդերքի վնասումով, մեծ ճարպոնի վնասումով, հաստ աղու շոշափող վնասում՝ ուղեկցված ներորովայնային արյունահոսությամբ եւ հեմոպերիտոնեումով, մամնական վնասվածքները:

Հանցագործությունն իր կամքից անկախ հանգամանքներում ավարտին չի հասցրել. բժշկական միջամտության արդյունքում հնարավոր է եղել փրկել տուժող Արթուր Բաբայանի կյանքը:

Գործով նախաքննության ավարտ է հայտարարվել:

ԿԱԽՎԵԼ Է

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ Կոտայքի մարզի Քաղսի համայնքի 31-ամյա բնակիչը ինքնասպան է եղել տան խորդանոցից կախվելու միջոցով:

Կատարվածը հարազատների համար մնում է առեղծված, թե ինչու նա պետք է վերջ տար կյանքին:

Դեպքով զբաղվում են իրավապահները:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Դեկտեմբերի 11-ից 12-ը Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 48 դեպք, որոնցից 1-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՎԱՌԵԼԱՓԱՅՏԻ ԽՆԴԻՐ ՈՒՆԵՆ

Տավուշում հաստատվել է Արցախից բռնագաղթած 780 ընտանիք՝2970 անձ: Նրանցից շատերը ներկայումս ձմռան վառելափայտի խնդիր ունեն: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին գրավոր հարցրել ենք, թե մարզում բնակություն հաստատած արցախցի ընտանիքների համար ինչպես է լուծվել ձմռան վառելափայտի խնդիրը, մարզի 4 անտառտնտեսությունները ընդհանուր առմամբ որքան վառելափայտ են տվել նրանց, ինչ հիմունքներով: Մարզպետարանից ստացված պատասխանն անորոշ է, վառելափայտի քանակի մասին տվյալներ չպարունակող. այնտեղ նշված է. «Տավուշի մարզում բնակություն հաստատած արցախցի ընտանիքներին, ըստ իրենց դիմումների, անտառտնտեսությունների կողմից տրամադրվել ու տրամադրվում է թափուկներից անվճար վառելափայտ»: Արցախից բռնագաղթած, Տավուշի մարզում հաստատված շատ ընտանիքներ լրագրողիս ասացին, որ բռնագաղթածների մեծ մասը Տավուշի մարզում թափուկների տեսքով անվճար վառելափայտ չի ստացել: Արցախից բռնագաղթածների ձմռան վառելափայտի հարցը լուծվում է նաեւ բարեգործական կազմակերպությունների կողմից: «Օքսֆորդ Հայաստան» բարեգործական հիմնադրամի կողմից, Նոյեմբերյանի համայնքապետարանի աջակցությամբ, 15 տոննա բրիկետ է բաշխվել Նոյեմբերյան համայնքի Բարեկամավան, Կոթի, Ոսկեվան, Ջուջեւան, Ջորական եւ Կողբ գյուղերում 63 վերաբնակեցված ընտանիքների (յուրաքանչյուր ընտանիքին՝ 250 կգ): Առաջիկա շաբաթների ընթացքում նախատեսվում է նման կերպ բաշխել եւս 15 տոննա վառելիք՝ համայնքի այլ գյուղերում բնակվող արցախցի ընտանիքներին:

ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐ ԵՆ ՍՏԱՑԵԼ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում ենք ուղարկել, թե Տավուշի մարզպետարանի աշխատակիցները եւ ինքը՝ որպես մարզպետ, 2023թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ որքան պարգեւավճար են ստացել պետական բյուջեից: Մարզպետարանից պատասխանել են, որ դեկտեմբերի 1-ի դրությամբ մարզպետարանի 72 աշխատակիցներ ստացել են 68 միլիոն 873 հազար 300 դրամ պարգեւավճար: Հայկ Ղալումյանի ստացած պարգեւավճարի չափի մասին մարզպետարանից հայտնել են. «Մարզպետները համարվում են եկամուտների հայտարարատու պաշտոնատար անձինք: Պահանջվող տեղեկատվությունը կարող եք ստանալ վերջիններիս կողմից ներկայացված հրապարակային հայտարարագրերում: Միաժամանակ հայտնում ենք, որ Ձեր կողմից բարձրացված հարցը պարունակում է անձնական տվյալները բացահայտելու բովանդակություն: Համաձայն ՀՀ աշխատանքային օրենքսգրքի 134-րդ հոդվածի 1-ին կետի՝ այն կարող է իրականացվել միայն աշխատողի գրավոր համաձայնությամբ»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԻՆՉՊԵՍ ԵՐԿՐՈՐԴ ԾՆՈՂ

ԲԱՐԻ, ՀՈԳԱՏԱՐ, ՀԱՅՐԵՆԱՍԵՐ

«Երբ սկսվեց քառօրյա, աղա 44-օրյա պատերազմը, նա ամենաթեժ կետերում էր՝ Մարտակերտից Շուշի: Աստված գուցե լսեց մեր աղոթքները ու փրկեց նրան, իսկ 2023-ին... Այլեւս անզոր էին մեր խնդրանքներն ու աղոթքները»,- Armlur.am-ի հետ զրույցում ասում է Արցախից բռնի տեղահանված Մերի Ահարոնյանը:

Մերին հորեղբորը հիշում է բարի, հոգատար, հայրենասեր եւ ինչպես երկրորդ ծնողի: Ասում է՝ քանի որ երիտասարդ էր եւ դեռ ընտանիքի հոգս չուներ ուսերին, իր հետ ավելի շատ մեծ եղբոր եւ ընկերոջ նման էր: «Իմ թիկունքն էր, ինձ ամեն հարցով օգնում էր, միշտ կողքիս էր: Իր մահը շատ ծանր տարանք: Առանձին էինք ապրում, բայց մի ընտանիք էինք՝ շատ սիրով ու համերաշխ: Հիմա կարծես մի բան պակաս է, ամեն օր իր մասին ենք խոսում, ասում ենք՝ եթե նա հիմա մեզ հետ լիներ, այսպես կասեր կամ այսպես կաներ: Ամեն օր այն հույսով եմ արթնանում, որ ինչպես ամեն առավոտ, գալու է մեր տուն, կանչի ու ասի. «Մերի՛, այս ժամին մարդ կքնի՞»»,- ասում է մեր զրուցակիցը:

Ռաման Ռոմայի Ահարոնյանը ծնվել է Մարտակերտի շրջանի Վանք գյուղում եւ ծառայել է Նոր Ղազանչի (Սիրխավենդի) N զորամասում, կրտսեր սերժանտ էր, հայրենասիրությունը ժառանգել էր մտավորական հորից, որը զոհվել էր արցախյան առաջին պատերազմի ժամանակ՝ 1992 թվականի սեպտեմբերի 26-ին: Մերիի խոսքով՝ կյանքից շուտ է հեռացել նաեւ տատիկը: «Սեպտեմբերի 19-ին, երբ բոլորս ապրում էինք մեր առօրյա կյանքով, դպրոցից նոր էի տուն եկել, հանկարծ կրակոցներ լսվեցին, գնալով ավելի էր սաստկանում. հասկացանք, որ պատերազմ է: Հայրս ու եղբայրներս նույնպես զինվորականներ էին, գտնվում էին առաջնագծում: Սեպտեմբերի 19-ի գիշերը մի կերպ լուսացրինք՝ այն հույսով, որ առավոտյան նորից ամեն ինչ առաջվանը կլինի, ու էլ կրակոցներ չեն լսվի: Ցավոք, ավելի թեժացավ, զոհեր, վիրավորներ, ժողովրդին արդեն տարհանում էին գյուղերից, որովհետեւ թշնամին արդեն գյուղի մատույցներում էր գտնվում: Այդ ժամանակ հորեղբայրս ու գյուղի երիտասարդները հավաքվեցին, որ գնան դիրքեր՝ օգնության: Նույն օրն էլ զոհվեց իմ հորեղբայրը զինակից բոլոր ընկերների հետ «Խաչենի Մոստ» կոչվող տեղամասում: Արդեն քանի օր հորեղբորիցս մենք սպասում էինք լուրի, փնտրում էինք բոլոր հիվանդանոցներում՝ հույս ունենալով, որ Աստված այս անգամ էլ կլսեր մեր աղոթքները: Սեպտեմբերի 23-ին գտանք մասունքները, մի մասը հուղարկավորեցինք ծնողների մոտ՝ Վանք գյուղում, իսկ մյուս մասը՝ Ստեփանակերտի եղբայրական գերեզմանոցում... Առանց հրաժեշտի, շատերի պես մենք եւս բռնեցինք գաղթի ճանապարհը: 2 ժամվա ճանապարհը հաղթահարեցինք շուրջ 48 ժամում՝ առանց հացի ու ջրի»,- հուզմունքով վերհիշում է Մերին:

Մերին ասում է, որ հայրենի տնից վերցրել են միայն այն ամենը, ինչ հիշեցնում է հորեղբորը: «Երբ տարհանվեցինք, հայրիկիս խնդրեցի՝ տանը ինչ որ հորեղբորս է պատկանում, վերցնի որպես հուշ: Հիմա մենք այդ հիշողություններով ենք ապրում»,- ասում է Մերի Ահարոնյանը:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆ ԻՋԵՑՎԵԼ Է

Դեկտեմբերի 12-ին տեղի է ունեցել ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի նիստ, որի ժամանակ որոշվել է իջեցնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով 9.25 %, ԿԲ խորհուրդը նաեւ որոշել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքը՝ 10.75 %, իսկ ԿԲ կողմից բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքը՝7.75 %:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄԵՑՎԵԼ Է

Անհատ ձեռնարկատեր Արթուր Մելիքբեկյանին պատկանող պատկանող հանրային սննդի օբյեկտում կրկնակի ստուգման արդյունքում ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Լոռու մարզային կենտրոնի տեսուչները խախտումներ չեն հայտնաբերել (Լոռու մարզ, քաղաք Վանաձոր): ՍԱՏՄ ղեկավարի որոշմամբ՝ հանրային սննդի օբյեկտի արտադրական գործունեության կասեցումը վերացվել է:

ԴԻՄԵ՛Ք ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԵՏԻ

Երկարատեւ թախիծի դեպքում դիմե՛ք հոգեկան առողջության մասնագետի. այս մասին հաղորդում է Առողջապահության նախարարությունը: «Բացասական տեղեկատվության մեծ հոսքը, որը շուրջօրյա ստանում ենք հեռուստատեսությունից կամ համացանցից, բերում է անձի սթրեսակայունության թուլացմանը, եւ հաճախ հենց ինքն է սթրեսային գործոն հանդիսանում, ինչը բերում է դեպրեսիվ խանգարումների կամ սթրեսով պայմանավորված այլ հոգեկան առողջության խնդիրների դեպքերի աճի:

Լեռնային Ղարաբաղի բնակիչների բռնի տեղահանումը ինքնին հանդիսանում է լուրջ սթրեսային գործոն: Նման իրավիճակում առավել սրվում են առկա հոգեկան առողջության խնդիրները կամ ի հայտ են գալիս սթրեսային գործոնի հետեւանքով քնի խանգարումներ, թախիծ, տագնապի զգացողություն, էմոցիոնալ անկայունություն:

Եթե դուք կամ ձեր հարազատն ունի անհանգստացնող, սովորականից երկար տեւող գանգատներ, դիմե՛ք հոգեկան առողջության մասնագետի (ընտանեկան բժիշկ, հոգեբան, հոգեբույժ):

Հոգեկան առողջության ծառայությունները հասանելի են, անվճար եւ կօգնեն հաղթահարել հոգեկան առողջության տեսանկյունից ծառացած յուրաքանչյուր խնդիր:

Կարեւոր է նաեւ կանխարգելել սթրեսը առողջ ապրելակերպի միջոցով:

Կարգավորե՛ք քունը (պահպանե՛ք քնի հիգիենան, ապահովե՛ք առողջ քուն):

Կարգավորե՛ք սնունդը (պահպանե՛ք սննդակարգը, օգտագործե՛ք առողջ սնունդ):

Զբաղվե՛ք ֆիզիկական եւ մտավոր ակտիվությամբ:

Ակտիվացրե՛ք եւ պահպանե՛ք սոցիալական շփումները»,- ասված է հաղորդագրության մեջ:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 12 պատահար. 21 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«ԲԻԷՍԹԻ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ -ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտը՝

- Արմավիրի մարզ, համայնք Փարաքար, գյուղ Այգեկ, 6-րդ փողոց, 4 հասցեում գտնվող 418,8 ք.մ. բնակելի տուն, 3,4 քմ զուգարան, 82,1 քմ ջրավազան, 179,1 քմ ծածկ, 37,1 քմ /81,6 խմ/ պարիսպ եւ 0,1997 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 83200000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ հոլանդական եղանակով, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 29.12.2023թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ հոլանդական եղանակով կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 01.07.2024թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթը եւ աճուրդի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին, լոտերի ամբողջական ցանկին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին եւ Բորսային՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքեր:

ՆԱԽԱԳԻԾ

ՊԵՏՏՈՒՐՔԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԿԲԱՐՁՐԱՑՎԵՆ

«Գործող օրենսդրությամբ սահմանված են ապրանքների ժամանակավոր պահպանության համար պետական տուրքի դրույքաչափեր: Կառավարությունն առաջարկում է բարձրացնել յուրաքանչյուր մեկ տոննայի համար 1000 դրամի չափով եւ մեկ տոննայից ավելի յուրաքանչյուր մեկ տոննայի համար եւս 300 դրամ սահմանված դրույքաչափերը»,- ասել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Արթուր Մանուկյանը: Նրա խոսքով՝ նոպատակը մաքսային վարչարարության իրականացման բնականոն ընթացքն ապահովելն է, ինչպես նաեւ հայտարարագրման գործընթացն առավել արդյունավետ դարձնելը:

«Առաջարկում ենք տրանսպորտային միջոցների համար այս պետական տուրքի դրույքաչափը բարձրացնել՝ նկատի ունենալով ժամանակավոր պահպանության ենթակա ապրանքների պահպանման տարածքների սահմանափակ հնարավորությունները»,- ընդգծել է զեկուցողը եւ հավելել՝ խոսքը վերաբերում է Գյումրու արտաքին տնտեսական գործունեության կենտրոնի տարածքում գտնվող ժամանակավոր պահպանության վայրին ու այդ տարածքի առավել արդյունավետ օգտագործմանը, ինչպես նաեւ մաքսային ձեւակերպումների ժամանակին իրականացմանը:

Ըստ Արթուր Մանուկյանի՝ նախաձեռնությամբ առաջարկվում է ապրանքների ժամանակավոր պահպանության առաջին օրվա համար պետական տուրք չգանձել, պետական տուրքի գանձումը սկսել երկրորդ օրվանից:

Զեկուցողը պատասխանել է պատգամավորների հարցերին՝ նշելով, որ ոլորտում եղել են խնդիրներ, մասնավորապես՝ հարկային չարաշահումներ, եւ դրանց լուծման ուղղությամբ Կառավարությունը մշտապես ներկայացրել է առաջարկություններ, փոփոխություններ կատարել Հարկային օրենսգրքում:

Արթուր Մանուկյանի խոսքով՝ Կառավարության ներկայացրած փոփոխության նպատակներից է նաեւ մաքսային մարմինների ժամանակավոր պահպանության վայրերը չդարձնել ավտոկայանատեղիներ: Նշվել է, որ այսօր Գյումրու ԱՏԳ տարածքում հնարավոր է սպասարկել 500 մեքենա:

Հարակից զեկուցմամբ հանդես է եկել Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Բաբկեն Թունյանը: Նրա խոսքով՝ քանի որ կան մարդիկ, որոնք մեքենաներ են ներկրում ոչ թե սեփական կարիքների համար, այլեւ վերավաճառելու նպատակով, այդ անձանց համար ավելի ձեռնտու է չմաքսազերծել մեքենան, սպասել, մինչեւ գնորդ կհայտնվի, եւ գործարք կատարելու ժամանակ միանգամից մաքսազերծել. «Այդ ամբողջ ընթացքում իրենք մեքենան թողնում են Գյումրու մաքսատան տարածքում, քանի որ վճարը համեմատաբար էժան է, եւ այդպես իրենց ձեռնտու է: Այսինքն՝ մարդիկ հետո կարողանում են վաճառել այն գնով, որը փակում է իրենց ծախսը»: Պատգամավորն ընդգծել է՝ հանձնաժողովը կողմ է քվեարկել նախագծին, քանի որ դրա ընդունումը համարել է տրամաբանական, ինչպես նաեւ առաջինից երկրորդ ընթերցում փոփոխություններ կատարելու վերաբերյալ պայմանավորվածություն ձեռք բերել զեկուցողի եւ հեղինակի հետ: Ելույթներում պատգամավորները ներկայացրել են փոփոխությունների վերաբերյալ իրենց դիտարկումներն ու առաջարկները:

ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցության անունից ելույթ է ունեցել խմբակցության քարտուղար Արծվիկ Մինասյանը: Անդրադառնալով «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանի՝ «այն թվերը չեն, որ օրենքներ բերվեն պաշտոնյաների համար բիզնեսներ ստեղծելու համար» դիտարկմանը՝ Արծվիկ Մինասյանը կոչ է արել ներկայացնել գեթ մեկ օրինակ՝ առ այն, որ վերջինս Կառավարության անդամ լինելու ընթացքում ներկայացրած լինի նախագիծ՝ ուղղված որեւէ անձի բիզնես շահերի սպասարկմանը: Ըստ խմբակցության քարտուղարի՝ պետք է պատասխանատու լինել սեփական խոսքերի համար եւ ասել մի բան, որը քիչ թե շատ իրականության հետ աղերս ունի: ՀՀ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության տեսակետը ներկայացրել է խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը: Նա հիշեցրել է, որ գլխադասային հանձնաժողովը դրական եզրակացություն է տվել նախագծին: Խմբակցության ղեկավարն անհրաժեշտ է համարել նախագիծը լավարկելու նպատակով առաջինից երկրորդ ընթերցում հավելյալ քննարկում կազմակերպել:

Խորհրդարանը ««Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրինագիծն առաջին ընթերցմամբ քննարկել է դեկտեմբերի 11-ի ԱԺ նիստում:

Պատգամավորները քվեարկություններով ընդունել են հերթական նիստերի ընթացքում քննարկված օրենսդրական նախաձեռնությունները:

ԼՈՒՐԵՐ

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՑՈՒՑԱԲԵՐՈՒՄ

Կարմիր խաչը սնունդ եւ բժշկական օգնություն է տրամադրում Արցախում մնացած հայերին: Կարմիր խաչից դժվարանում են ասել՝ արդյոք արցախցիների տեղահանումից հետո հաշվառել են Լեռնային Ղարաբաղում մնացած հայերին: Արցախում բնակվող հայերի վերաբերյալ ստույգ վիճակագրական տվյալներ կազմակերպությունը չունի:

Այս մասին ասել է ԿԽՄԿ հայաստանյան ներկայացուցչության հաղորդակցման ղեկավար Ջառա Ամատունին: Նրա խոսքով՝ միջազգային կազմակերպությունը այս պահին ներկա է Լեռնային Ղարաբաղում, շարունակում է աշխատել: 25 մարդու կազմակերպությունը օգնել է, որպեսզի նրանք հեռախոսազանգի կամ տեսակապի օգնությամբ կապ հաստատեն Հայաստանում կամ արտերկրում գտնվող իրենց հարազատների հետ: Նրանցից 20-ին մարդասիրական օգնություն են ցուցաբերել՝ սնունդ կամ հիգիենայի պարագաներ, նաեւ բժշկական օգնություն են տրամադրել:

ԿՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵՆ ՌԱԶՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Դեկտեմբերի 12-ին ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի պաշտոնական այցը Կիպրոսի Հանրապետություն մեկնարկել է դիմավորման հանդիսավոր արարողությամբ՝ Կիպրոսի ազգային գվարդիայի պատվո պահակախմբի եւ զինվորական նվագախմբի մասնակցությամբ:

Հնչել են Հայաստանի Հանրապետության եւ Կիպրոսի Հանրապետության պետական օրհներգերը: Այնուհետեւ տեղի է ունեցել ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի եւ Կիպրոսի Հանրապետության պաշտպանության նախարար Միխալիս Յորղալասի առանձնազրույցը, որին հաջորդել է ընդլայնված կազմով հանդիպում:

Հանդիպման ընթացքում քննարկվել են պաշտպանության բնագավառում հայ-կիպրական համագործակցությանն առնչվող մի շարք հարցեր:

Կողմերն ամփոփել են համագործակցության ներկայիս ընթացքն ու նախանշել դրա զարգացման նոր հնարավորությունները՝ պատրաստակամություն հայտնելով գործակցել ավելի ընդգրկուն օրակարգով՝ ուսումնավարժական ծրագրեր, փորձի փոխանակում տարբեր ոլորտներում, ռազմատեխնիկական համագործակցություն եւ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր: Հանդիպման ավարտին երկու երկրների պաշտպանության նախարարները հանդես են եկել լրատվամիջոցների համար համատեղ հայտարարությամբ, որի ընթացքում վերահաստատել են հագեցած օրակարգով համագործակցելու պատրաստակամությունը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՇԱՏ ԵՆ ԱՅՑԵԼԵԼ

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՌԵԿՈՐԴ Է

Ընթացիկ տարվա հունվար-նոյեմբեր ամիսներին Հայաստան է այցելել 2.2 մլն զբոսաշրջիկ, որը երկրի համար բացառիկ ռեկորդ է: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ 42 տոկոս աճ է գրանցվել: Վիճակագրական տվյալների համաձայն՝ Հայաստան եկածների կեսից ավելին Ռուսաստանից է, որին հաջորդում է Վրաստանը, այնուհետեւ Իրանն ու ԱՄՆ-ն: Մամուլի սրահում հրավիրված ասուլիսում Տուրիզմի հայկական ֆեդերացիայի նախագահ Մեխակ Ապրեսյանը նշեց, որ զբոսաշրջային այցերի այս աննախադեպ ակտիվությունը պայմանավորված է ինչպես աշխարհաքաղաքական զարգացումներով, ռուս-ուկրաինական խնդրով, այնպես էլ Հայաստանի ակտիվ աշխատանքով:



«Սա շատ կարեւոր արդյունք է, որովհետեւ կորոնավիրուսի ու պատերազմի ուղղակի ազդեցությունը հենց կրել է զբոսաշրջության ոլորտը եւ այժմ տեսնում ենք ակտիվություն: Ամեն ինչ արվել է, որ Հայաստանը պատշաճ ներկայացվի, ու կարողանում ենք մեր դիրքերը պահպանել համաշխարհային շուկայում»,-ասաց Մեխակ Ապրեսյանը:

Որքանո՞վ են տուրիստական ընկերություններն իրենց վրա զգում զբոսաշրջային այս հոսքի ազդեցությունը: «Վիզիթ Արմենիա» տուրիստական ընկերության հիմնադիր Վլադիմիր Գեւորգյանի խոսքով՝ առաջին հայացքից թվերը կարեւոր են, սակայն այստեղ խոսքը կազմակերպված տուրիզմի մասին չէ: Շատ են անհատական այցելությունները, մեծ թիվ են կազմում նաեւ հայերը, որոնք գալիս են առանձին նախաձեռնությամբ եւ տուրիստական ընկերությունների հաճախորդները չեն:

«Այս այցերը երկրի բյուջեի, տնտեսական ակտիվության տեսանկյունից շատ կարեւոր են. չէ՞ որ Հայաստան եկած զբոսաշրջիկը 7-10 օրվա ընթացքում միջինը մինչեւ 1500 դոլար գումար է ծախսում: Ամեն դեպքում, մենք արձանագրում ենք, որ այս քանակության մի զգալի հատվածը չի եղել տուրիստական ընկերությունների հաճախորդ: Ցավոք, դեռ այս այցելությունները տուրիստական ընկերություններին մեծ բան չեն ասում»,-ասաց Վլադիմիր Գեւորգյանը:

Մասնագետներն արձանագրում են, որ կազմակերպված զբոսաշրջությունը կայուն վերականգնման փուլ չի մտել: Մեխակ Ապրեսյանը նշեց, որ գործընկերները տարբեր երկրներից դեռ խիստ զգուշավոր են Հայաստան զբոսաշրջային խմբեր ուղարկելու առումով: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ երկրների իրավասու մարմինների պաշտոնական կայքերում Հայաստանը դեռ նշված է կարմիրով:

«Կազմակերպված տուրիզմն է, որ նպաստում է տնտեսության համաչափ զարգացմանը, ամբողջ տարածքում եկած գումարների հավասարաչափ բաշխմանը, առավելագույնս պատշաճ ներկայացվում է մշակութային ժառանգությունը: Անհատական տուրիզմի պարագայում այդ հնարավորություններն ավելի քիչ են»,-ասաց Մեխակ Ապրեսյանը:

Որո՞նք պետք է լինեն առաջիկա քայլերը: Մասնագետների կարծիքով՝ անհրաժեշտ է դիվերսիֆիկացնել շուկաները, բոլոր ռեսուրսները օգտագործելով՝ կարողանալ կոտրել այդ կարծրատիպը եւ ցույց տալ, որ Հայաստանն անվտանգ է: Դրան հասնելու համար նաեւ շատ կարեւոր են Հայաստանում միջազգային նշանակության միջոցառումներ կազմակերպելը, տեղական կայացած փառատոններին աջակցելը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԵԴԱԼ Է ՆՎԱՃԵԼ

Հայաստանի ծանրամարտի տղամարդկանց հավաքականի անդամ, Եվրոպայի չեմպիոն Դավիթ Հովհաննիսյանը երկամարտի 370 կգ արդյունքով արծաթե մեդալ է նվաճել Դոհայում ընթացող ծանրամարտի Գրան պրիում, որը վարկանիշային է Փարիզի 2024 թվականի օլիմպիական խաղերի համար. այս մասին տեղեկացնում են ԿԳՄՍՆ-ից:

96 կգ քաշայինների «Պոկում» վարժությունում Հովհաննիսյանը ցույց է տվել 170 կգ արդյունք, իսկ «Հրում» վարժությունում գլխավերեւում պահել է 200 կգ կշռող ծանրաձողը:

Հայաստանի մյուս ներկայացուցիչ, 89 կգ քաշային Անդրանիկ Կարապետյանը զբաղեցրել է 7-րդ տեղը՝ երկամարտում ցույց տալով 370 կգ արդյունք (170 + 200 կգ):

Ավելի վաղ 18-ամյա Ալեքսանդրա Գրիգորյանը դարձել էր Գրան պրիի բրոնզե մեդալակիր՝ մեծահասակների պայքարում նվաճելով իր առաջին մեդալը:

Երիտասարդների աշխարհի ոսկե մեդալակիր, 55 կգ քաշային Ալեքսանդրա Գրիգորյանը երկամարտում ցույց էր տվել 189 կգ արդյունք եւ կանգնել էր պատվո հարթակի երրորդ աստիճանին: «Պոկում» վարժությունում հայ մարզուհին գլխավերեւում պահել էր 81 կգ կշռող ծանրաձողը, իսկ «Հրում» վարժությունում՝ 108 կգ-ն:

Հայաստանի ծանրամարտի հավաքականի կազմում, Փաշիկ Ալավերդյանի գլխավորությամբ, մրցավայր են մեկնել նաեւ Գարիկ Կարապետյանը, Սամվել Գասպարյանը (երկուսն էլ՝ 102 կգ), Վարազդատ Լալայանն ու Սիմոն Մարտիրոսյանը (+109 կգ):

ՉՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՇԱՊԻԿԸ

Բրազիլիայի հավաքականի եւ Սաուդյան Արաբիայի «Ալ Հիլալի» հարձակվող Նեյմարը բրազիլական «Սանթոսի» նախագահ Մարսելո Տեյշերային խնդրել է չօգտագործել 11 համարը մինչեւ իր վերադարձը:

«Մենք սպասում ենք Նեյմարի վերադարձին: Նրա անունից ինձ խնդրել են չօգտագործել 11 համարը մինչեւ իր վերադարձը: Ես արդեն երջանիկ եմ եւ լիահույս:

Երկրորդ դիվիզիոնում մենք կհրաժարվենք նաեւ 10 համարից, որով ժամանակին հանդես է եկել Պելեն: Նոր աստղը կհայտնվի այն ժամանակ, երբ մենք վերադառնանք ուժեղագույն դիվիզիոն: 11 համարը կսպասի մեր աստղի վերադարձին»,- Տեյշերայի խոսքը մեջբերում է ESPN-ը:

ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Անգլիական «Մանչեսթեր Յունայթեդի» հոլանդացի գլխավոր մարզիչ Էրիկ տեն Հագը ակումբի ղեկավարությանը խնդրել է ազատվել անգլիացի կիսապաշտպան Ջեյդոն Սանչոյից, որը կարգապահական խնդիրների պատճառով սեպտեմբերից հեռացված է գլխավոր թիմից եւ առանձին է մարզվում:

«Մանչեսթեր Յունայթեդը» Իսպանիայի չեմպիոն «Բարսելոնային» խնդրել է Ջեյդոն Սանչոյին փոխանակել բրազիլացի կիսապաշտպան Ռաֆինյա Դիասի հետ. հաղորդում է Sport.es-ը:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՄԱՏԵՂ ԵՐԳ ԵՆ ԹՈՂԱՐԿԵԼ

System of a Down-ի երգիչ Սերժ Թանկյանը եւ Black Sabbath-ի կիթառահար Թոնի Այոմին Gibson-ի գործադիր տնօրեն Սեզար Գուեկյանի հետ միասին միավորվել են նոր՝ Deconstruction բարեգործական սինգլի համար. այս մասին գրում է Consequence.net-ը: Ստացված հասույթը կտրամադրվի «Հայաստան» հիմնադրամի «Արցախի փախստականների նախաձեռնությանը»:

Կայքի փոխանցմամբ՝ արտիստները երգը ձայնագրել են The Gibson Band խմբի կազմում, որը պարբերաբար կներկայացնի երաժիշտների, որոնք կհամագործակցեն՝ ի նպաստ տարբեր բարեգործական նպատակների:

Եվ Թանկյանը, եւ Գուեկյանը ծագումով հայ են. Թանկյանը բազմիցս բարձրաձայնել է Հայաստանի խնդիրների մասին ինչպես System of a Down-ի հետ համագործակցությամբ, այնպես էլ անհատապես: «Իմ լավ ընկերոջ՝ Սեզար Գուեկյանի եւ Թոնի Այոմիի հետ համագործակցությունն ինձ համար երազանք էր,-ասել է Թանկյանը:- Ուրախ եմ, որ մենք օգտագործում ենք մեր հարթակը նման մեծ բարեգործության համար: Ճիշտ մտադրություններով երաժշտությունը կարող է ոգեշնչել եւ դրական փոփոխություններ ստեղծել»:

Այոմին հավելել է. «Հիանալի էր Սերժի հետ կրկին համագործակցելն ու Սեզարի հետ համատեղ երգ թողարկելը: Հայերը, իսկապես, հիանալի ժողովուրդ են, եւ ես շատ ուրախ եմ նման գործում ներգրավված լինելու համար»: Երգից բացի, աճուրդի է հանվում Թանկյանի «Մեր սարերը» վերնագրով բնօրինակ նկարը, ինչպես նաեւ 2023 թվականի Les Paul Standard կիթառը, որը զարդարված է նշված կտավի պատկերով: Երկու իրերի համար էլ սակարկություններ կարող են կատարվել Julien's Auctions-ում:

ԴԻՄԱՀԱՐԴԱՐԻՆ ԴԱՏԻ ԵՆ ՏՎԵԼ

Գոհար Ավետիսյանի նախկին ամուսինը՝ Սերգեյ Գրիգորյանը, դատի է տվել նրան որդու պատճառով. հաղորդում է Super-ը: Սերգեյ Գրիգորյանը բացատրել է, որ չի ցանկանում հրապարակել ընտանեկան գործերի բոլոր մանրամասները, սակայն նա ասել է, որ առ այսօր որդու՝ Գասպարի ծննդյան վկայականում ինքը նշված չէ որպես հայր: Աղբյուրի փոխանցմամբ՝ տղայի ծննդյան պահին զույգն ամուսնացած չի եղել: «Պատճառն իմ անհեռատեսությունն ու վստահությունն էր»,- ասել է Գրիգորյանը: Նա նաեւ որոշել է չասել, թե որքան հաճախ է տեսնում Գասպարին, եւ արդյոք դիմահարդարը խանգարում է որդու հետ շփմանը:

● *Դեկտեմբերի 19-ին՝ ժամը 18:00-ին, Հայաստանի պատմության թանգարանում տեղի կունենա «Ինքնության մասունքներ կորուսյալ Գարդմանից, Շիրվանից եւ Նախիջեւանից» խորագրով ժամանակավոր ցուցադրության բացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՄԱՔՍԱՅԻՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ Երեւանում գրանցված կազմակերպությունը երրորդ երկրից ապրանքներ ներմուծելիս մաքսային ձեւակերպումները կարող է արդյոք իրականացնել Սիսիանում:

Կարո Հարությունյան (38 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի 2003 թվականի հուլիսի 4-ի N03/42-Ն հրամանի 1-ին կետի համաձայն՝ կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների եւ տրանսպորտային միջոցների մաքսային ձեւակերպումների իրականացման վայրեր են այն տարածաշրջանային մաքսատները, որոնց գործունեության գոտին ընդգրկում է տվյալ կազմակերպության գտնվելու վայրը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի N 865-Ն որոշման 2-րդ կետի գ) ենթակետի համաձայն՝ Արարատյան տարածաշրջանային մաքսատան գործունեության տարածք է հանդիսանում Երեւանը, Հայաստանի Հանրապետության Արարատի, Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի եւ Գեղարքունիքի մարզերի վարչական տարածքները, ուստի Երեւանում գրանցված կազմակերպության կողմից ապրանքների ներմուծման դեպքում մաքսային ձեւակերպումների իրականացման վայր է համարվում Արարարատյան տարածաշրջանային մաքսատունը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է թույլատրել «Վերամշակում՝ մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգով հայտարարագրված ապրանքների բացթողնումը կամ ներմուծված ապրանքների նկատմամբ կիրառված «Վերամշակում՝ մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգի ժամկետի երկարաձգումը միայն մեկ անգամ մինչեւ երկու տարին չգերազանցող ժամկետով:

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ե՞րբ է թույլատրվում փոփոխել աշխատանքի էական պայմանները:

Մարինե Մարգարյան (36 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Աշխատանքի վայրի, աշխատանքի վարձատրության չափի եւ (կամ) այն որոշելու ձեւի, արտոնությունների, աշխատաժամանակի (աշխատանքի եւ հանգստի) ռեժիմի, տարակարգերի եւ պաշտոնների անվանումների, աշխատանքային պայմանագրի տեսակի եւ (կամ) գործատուի փոփոխման դեպքում թույլատրվում է փոփոխել աշխատանքի էական պայմանները: Փոփոխելու դեպքում գործատուն պետք է գրավոր ծանուցի մինչեւ 1 տարի աշխատողին ոչ ուշ, քան 14 օր առաջ, 1-5 տարի աշխատողին՝ 35 օր առաջ, 5-10 տարի աշխատողին՝ 42 օր առաջ, 10-15 տարի աշխատողին՝ 60 օր առաջ:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Աշխատանքային պայմանագիրը կողմերի համաձայնությամբ լուծելիս մի կողմը գրավոր առաջարկում է մյուս կողմին լուծելու պայմանագիրը: Համաձայնության դեպքում մյուս կողմը 7 օրվա ընթացքում պետք է ծանուցի առաջարկ ներկայացրած կողմին, որից հետո կնքվում է գրավոր համաձայնագիր:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Ռեժիսոր Տիգրան Առաքելյանի «Ջակո» լիամետրաժ անիմացիոն նախագիծն այսօր ընտրվել է մասնակցելու «Անսի» միջազգային կինոփառատոնի 4-րդ՝ «Residency» ծրագրում՝ լիամետրաժ անիմացիոն ֆիլմի գրաֆիկայի զարգացման համար:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-1 - 2 + 1 + 4
Կոտայքի լեռներ	0 - 2 + 1 + 4
Կոտայքի նախալեռներ	+ 2 + 3 + 5 + 7
Գեղարքունիք	- 2 + 1 + 3 + 7
Լոռի	- 1 + 2 + 3 + 6
Տավուշ	+ 2 + 3 + 6 + 9
Արագածոտնի լեռներ	- 1 - 3 + 1 + 4
Արագածոտնի նախալեռներ	+ 2 + 5 + 5 + 9

Արարատ	+ 2 + 6 + 6 + 11
Արմավիր	+ 2 + 5 + 8 + 10
Վայոց ձորի լեռներ	0 - 3 + 5 + 8
Վայոց ձորի նախալեռներ	+ 3 + 6 + 9 + 11
Սյունիքի հովիտներ	+ 4 + 6 + 10 + 13
Սյունիքի նախալեռներ	+ 1 + 3 + 6 + 9
ԼՂՀ	+ 2 + 4 + 5 + 8
Երեւան	+ 3 + 5 + 6 + 8

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **12.12.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*